ՀՏԴ : 929:891.981 Բաղդասարյան + 891.981

ՌՈԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)*



Բանասիրական գիտությունների դոկտոր, գրականագետ, լեզվաբան, արձակագիր, հրապարակախոս Ռոբերտ Անդրանիկի Բաղդասարյանը ծնվել է Երևանում 1947 թ. սեպտեմբերի 20-ին. մի ընտանիքում, որի ակունքներն ու արմատներն Արևմտյան Հայաստանից են, իսկ ծնողները՝ Վանից և Նոր Նախիջևանից (Դոնի Ռոստով): Եվ բնական ու ներդաշնակ էր նրա հետաքրքրությունը ոչ միայն մայրենի հայոց լեզվի ու գրականության, մշակույթի և պատմության նկատմամբ, այլ նաև նվիրվածությունը ռուսաց լեզվին ու գրականությանը, ռուսական մշակույթին, որոնք դարձան իր մասնագիտական գործունեության և հոգևոր զարգացման անկյունաքարերից մեկը:

Ռ. Բաղդասարյանն անցել է քաղաքացու և անձի ձևավորման բոլոր փուլերը. Երևանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտն ավարտելուց հետո նշանակվել է աշխատանքի Լոռվա հեռավոր գյուղերից մեկում՝ Ղաչաղանում (այժմ՝ Արևածագ)՝ որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ, ապա զորակոչվել է խորհրդային բանակ՝ ծառայելով Ռուսաստանում՝ Լենինգրադի մարզի Վիբորգ քաղաքի զորամասերից մեկում: Վերադառնալով հարազատ Երևան՝ եռանդով սկսել է կեսդարից ավել աշխատանքային գործունեությունը:

Ինստիտուտում ուսման տարիներին նրան դասախոսել են հայտնի գրականագետներ և լեզվաբաններ՝ Տ. Հախումյանը, Զ. Յասինսկայան, Մ. Միրզա-Ավակովան, Վ. Զիտունին, Ռ. Մանուչարյանը և այլք, որոնք նկատել էին իրենց շնորհալի ուսանողի պրպտուն միտքը, խոր գիտելիքները, գիտական ջիղը, կանխագուշակել նրա ապագա հետազոտությունների ուղիներն ու հեռանկարները, մեծ հույսեր կապել՝ որպես ապագա գրականագետի և գործընկերոջ՝ բուհական համակարգում:

Ռ. Բաղդասարյանի ուսանողական և հետագա տարիները ցույց տվեցին, որ նա մեծ հետաքրքրություն է տածում հիմնականում Հայաստանի ու Ռուսաստանի գրական-մշակութային և պատմահասարակական հարաբերությունների խնդիրներին:

XX դարի, մասնավորապես՝ խորհրդային ժամանակաշրջանի, հայ-ռուսական գրական կապերը լրջորեն հետազոտող գիտնականը հարստացրել է գրականագիտությունը և գրաքննադատությունը բազմաթիվ գիտական հոդվածներով, մի շարք հետաքրքիր գիտական մենագրություններով՝ «Նիկոլայ Տիխոնովը և Հայաստանը» (1995), «Անտոկոլսկին և Հայաստանը» (2004), «Կարեն Միքայելյան. ստեղծագործությունը և ավանդը ռուս-հայկական գրա-

---

* Ներկայացվել է 22. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:

կան-մշակութային փոխադարձ կապերում» (2010) և այլն: Նրա գիտական ու ստեղծագործական ակտիվում է ավելի քան երկուհարյուր հոդված՝ հայկական և ռուսական պարբերականներում:

Ռ. Բաղդասարյանի գրականագիտական ամենամեծ վաստակը կարելի է համարել «Կարեն Միքայելյան. ստեղծագործությունը և ավանդը ռուս-հայկական գրական-մշակութային փոխադարձ կապերում» գիրքը. այն գրավեց ոչ միայն հայ և ռուս բանասեր մասնագետների ուշադրությունը, այլև առաջացրեց լայն հասարակության հետաքրքրությունը և՛ Հայաստանում, և՛ Ռուսաստանում: Մենագրությունն առաջինն ու միակն է հայ և ռուս գրականագիտության մեջ, որտեղ բազմակողմանի ներկայացված է 1937-ին բռնադատված անվանի հայ արձակագիր, թարգմանիչ, գրական-մշակութային գործիչ, մոսկվաբնակ, ծագումով ազուլիսցի Կարեն Սարգսի (ռուսական միջավայրում՝ Գերասիմ Սերգեյի) Միքայելյանի հարուստ կյանքը, գրական-հասարակական ու հայրենասիրական բեղմնավոր գործունեությունը: Միքայելյանի բարեկամների և գործընկերների թվում էին Տերյանը, Չարենցը, Բրյուսովը, Տիխոնովը, Անտոկոլսկին և այլք: Կ. Միքայելյանի՝ լուսահոգի կրտսեր զավակը՝ մի շարք հայտնի խորհրդային ֆիլմերի հեղինակ, կինոռեժիսոր Սերգեյ Միքայելյանը, անմիջապես արձագանքեց ջերմ շնորհակալական նամակով իր նշանավոր հոր մասին գրված գրքի հեղինակին. «Հարգելի Ռոբերտ Անդրանիկի, շատ շնորհակալ եմ Ձեզ: Մեծ հետաքրքրությամբ և ալեկոծված սրտով կարդացի ձեր գիրքը. հրաշալի, մանրակրկիտ, իմաստուն և մեծ աշխատանք: Կարդալուց հետո իմ մանկության հիշողությունները, ցրված տեղեկությունները, հորս կյանքի ինձ քիչ հայտնի տարիները միացվեցին և Ձեր շնորհիվ ձեռք բերեցին հզոր, համարձակ, տաղանդավոր գրող-հայրենասերի կերպարը»:

Ռ. Բաղդասարյանի գիտական հետաքրքրությունները դուրս են գալիս բուն բանասիրության բնագավառից: Նա զբաղվել է նաև հայ ժողովրդի պատմության, մասնավորապես՝ Մեծ եղեռնի ուսումնասիրությամբ: Գիտնականի գրչին է պատկանում 2003 թ. լույս տեսած «Ցեղասպանությունը և Ռուսաստանի հայ մտավորականությունը» ծավալուն մենագրությունը: Այս աշխատանքով գիտնական-բանասերը իրեն դրսևորեց նաև որպես բանիմաց պատմաբան՝ ընթերցողին ծանոթացնելով ռուսահայ մտավորականության ականավոր ներկայացուցիչներ Գ. Զանչիևի, Ա. Ջիվելեգովի, Գ. Զալդուչյանի և այլոց մշակութային-հասարակական ու ազգային-հայրենասիրական գործունեությանը հայերի ցեղասպանության տարիներին, ներկայացնելով նաև սեփական տեսակետներն ու մոտեցումները նշված գործիչների և դաժան դարաշրջանի վերաբերյալ:

Գիտնականն այսօրվա Հայաստանում ոչ միայն ճանաչված գրականագետ է, այլև՝ ռուսաց լեզվի ու ռուս գրականության լավագույն մասնագետներից մեկը: Տարբեր տարիներին նա դասավանդել է ռուսաց լեզու, գրականություն, գրականագիտության տեսություն, հայ-ռուսական գրական կապերի հատուկ դասընթացներ մի շարք բուհերում, այդ թվում՝ իր alma mater*-ում, եղել է ռուս գրականության գծով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի մասնագիտացված գիտխորհրդի անդամ, ընդդիմախոսել թեկնածուական և դոկտորական բազմաթիվ թեզեր:*

Ռ. Բաղդասարյանը նաև ստեղծագործական միությունների անդամ է. 1981-ից՝ ԽՍՀՄ/Հայաստանի ժուռնալիստների միության, 2013-ից՝ Հայաստանի գրողների միության:

Հմուտ գիտնական ու ակտիվ քաղաքացի Բաղդասարյանը պատկանում է այն մարդկանց շարքին, ով խորապես տեղյակ է ժամանակակից հայկական, ռուսական և համաշխարհային քաղաքական ու գրական-հասարակական զարգացումներին, հայ իրականության ընթացիկ խնդիրներին: Դրա մասին են վկայում նրա՝ խորիմաստ, երբեմն սուր հարցադրումներով հոդվածները տեղական և ռուսաստանյան մամուլում՝ վկայելով նրա հրապարակախոսական տաղանդի մասին («Լիտերատուրնայա գազետա», «Լիտերատուրնայա Արմենիա», «Գոլոս Արմենիի», «Գրական թերթ», «Նորք», «Գարուն» և այլն): Նրա՝ վառ, արտահայտիչ, գեղարվեստական և լրագրողական՝ միայն իրեն բնորոշ ոճով գրված հոդվածներն ու ակնարկները Սայաթ-Նովայի, Իսահակյանի, Թումանյանի, Տերյանի, Զարենցի, Պուշկինի, Նեկրասովի, Գորկու, Բրյուսովի, Գորոդեցկու, Տիխոնովի, Անտոկոլսկու, Էրենբուրգի, Բուլգակովի և գրականության այլ երևելիների մասին գրավել են գրքասեր շրջանակները, արժանացել գրականագետների ուշադրությանը:

Ռ. Բաղդասարյանը նաև հետաքրքիր գրող է «փոքր արձակի» ժանրում, որի ռուսալեզու՝ ուրույն, լակոնիկ և պարզ պատմվածքներն ու նովելները ժողովածուների տեսքով տպագրվել են Երևանում [«Ժամանակի ծամածռություններ» (2012), «Մայրամուտին» (2013), «Ունայնություն ունայնությանց» (2014), «Ղաչաղան. Լռվա նոթեր» (2016) և այլն]՝ ծանոթացնելով XX դ. երկրորդ կեսի հայ իրականության, երևանցիների կյանքի հետ, նրբորեն նկարագրելով մարդկային ճակատագրերը, հարաբերությունները, հույզերը, մտորումները: Այդ գործերը նույնպես գտել են իր շնորհակալ ռուսալեզու ընթերցողին …

Գիտնականի ուղին արժանապատիվ, արդյունավետ և արգասավոր է, լի հաջողված ուսումնասիրություններով: Նրա կյանքն այնքան բովանդակալից է, որ կարելի է ասել. դեռ շատ բան առջևում է …

Երկու տասնամյակից ավել Ռ. Բաղդասարյանն իր գիտահետազոտական գործունեությունը հաջողությամբ համատեղում է ՀՀ ազգային ժողովի աշխատակազմում պատասխանատու, բարձր գնահատված աշխատանքով. պարգևատրվել է ԱԺ նախագահի շնորհակալագրով (2005, 2012 թթ.):

Ռ. Բաղդասարյանը ընտանիքին նվիրված անձնավորություն է. հոգատար ամուսին, երեք զավակի հայր, երեք թոռան պապ: Նրա հետաքրքրասիրությունների շարքում են լուսանկարչությունը, գեղանկարչությունը …

Ցանկանք վաստակաշատ հոբելյարին ստեղծագործական նորանոր հաջողություններ, քաջ առողջություն ու արևշատություն:

ՄԻՔԱՅԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

Բ. գ. դ., Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոնի ղեկավար: Գիտական հետաքրքրությունները՝ հայ-ռուսական գրական-մշակութային և հասարակական-քաղաքական հարաբերությունների ուսումնասիրություն: Հեղինակ է ավելի քան 20 մենագրության, բազմաթիվ հոդվածների ու հրապարակումների:
russiancentre@brusov.am